

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

\_\_\_\_\_ 2017 թվականի N \_\_\_\_\_-Ն

«ԳՅՈՒՄՐՈՒ «ԲԱԼԱՏՈՆ» ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ  
6-Ի N 575-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ, 64-րդ հոդվածները և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 24-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Սարգսյան 15 հասցեում գտնվող 805,0 հազ. ՀՀ դրամ սկզբնական արժեքով և 1033 քառ. մետր ընդհանուր մակերեսով շենքը, 7811,0 հազ. ՀՀ դրամ սկզբնական արժեքով և 30 քառ. մետր մակերեսով կաթսայատունը և 0.3745 հեկտար մակերեսով հողատարածքը (22.04.2005թ. թիվ 519835 անշարժ գույքի օգտագործման իրավունքի գրանցման վկայական), հետ վերցնել «Գյումրու «Բալատոն» ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և թողնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը:

2. «Գյումրու «Բալատոն» ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 29.210.01919) միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Վահան Թեքեյանի անվան Գյումրու N 2 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համարը՝ 29.210.01913):

3. Սահմանել, որ՝

1) «Գյումրու «Բալատոն» ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը «Վահան Թեքեյանի անվան Գյումրու N 2 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

2) վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվելու են «Վահան Թեքեյանի անվան Գյումրու N 2 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

4. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել՝

1) սույն որոշման 2-րդ կետում նշված միացած պետական ոչ առևտրային կազմակերպության՝

ա. հանձնվող գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը, ինչպես նաև հաստատել գույքի կազմը, արժեքը, միացման պայմանագիրը և փոխանցման ակտը.

բ. գործունեության դադարման պետական գրանցումը.

գ. սովորողների ուսումնառության բնականոն գործընթացը,

2) «Վահան Թեքեյանի անվան Գյումրու N 2 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ վերակազմակերպումից բխող համապատասխան փոփոխությունների կատարումը և պետական գրանցումը «Վահան Թեքեյանի անվան Գյումրու N 2 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

5. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության կառավարությանն ներկայացնել առաջարկություն՝ սույն որոշման 1-ին կետում նշված ք, Գյումրի, Սարգսյան 15 հասցեում գտնվող անշարժ գույքերի հետագա օգատագործման վերաբերյալ:

6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Ավագ և հիմնական դպրոցների ցանկը հաստատելու մասին» N 575-Ն որոշման հավելվածի 159-րդ կետը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ «ԲԱԼԱՏՈՆ» ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ՀԵՏ  
ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 575-Ն  
ՈՐ ՈՇ ՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

### **Անհրաժեշտությունը**

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ուսումնական հաստատություններում աշակերտների թվի նվազման և ուսումնական տարածքների (շենք) օպտիմալ օգտագործմամբ:

### **Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը**

«Գյումրու «Բալատոն» ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսումնառում է 70 սովորող, սակայն նախատեսված է 172 սովորողի համար:

«Գյումրու «Բալատոն» ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպելով և միացնելով «Վահան Թեքեյանի անվան Գյումրու N 2 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հնարավորություն կստեղծվի ուսումնական տարածքների օպտիմալ օգտագործման համար, ինչի արդյունքում միացվող պետական ոչ առևտրային կազմակերպություններում աշակերտների բնականոն ուսումնական գործընթացը կկազմակերպվի առավել արդյունավետ, ինչն էլ իր հերթին կնպաստի կրթության որակի բարձրացմանը: «Վահան Թեքեյանի անվան Գյումրու N 2 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսումնառում է 460 սովորող, սակայն ուսումնական մասնաշենքը նախատեսված է 800 սովորողի համար:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 126-րդ հոդվածը սահմանում է. «Կազմակերպության վերակազմակերպումը, ինչպես նաև դրա նկատմամբ պարտավորական կամ այլ իրավունքներ ունեցող անձանց փոփոխությունը հիմք չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե տեղի չի ունենում աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատում:»:

Միացման արդյունքում, նոր հաստիքացուցակի հաստատմամբ հնարավոր են հաստիքների կրճատումներ, մասնավորապես վարչական և ուսումնաօժանդակ, պայմանավորված նոր ուսումնական տարվա սկզբին արտադրական ծավալների փոփոխմամբ / աշակերտների թվի փոփոխություն/:

### **Ակնկալվող արդյունքը**

Հանրության բարձրորակ կրթության ապահովման համար ստեղծել պայմաններ, կրթական ուսումնական հաստատությունները համալրել մանկավարժական ներուժով:

## ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու «Բալատոն» ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու, **գույք հետ վերցնելու և ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն կամ բացակայություն չկա:

## ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու «Բալատոն» ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու, **գույք հետ վերցնելու և ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ**  
**ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

	<b>Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը</b>	<b>Առարկության, առաջարկության բովանդակությունը</b>	<b>Եզրակացություն</b>	<b>Կատարված փոփոխություն</b>
1.	<p>ՀՀ արդարադատության նախարարություն            2017թ.-08-10            02/14/14204-17</p>	<p>1. Նախագծի վերնագրում և 3-րդ կետում գործունեությունը դադարող ՊՈԱԿ-ի անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել պետական գրանցում ստացած վերջին կանոնադրությանը:</p> <p>2. Նախագծի 1-ին կետում «անշարժ գույքի օգտագործման իրավունքի գրանցման» բառերը կրկնվում են:</p> <p>3. Նախագծում 4-րդ կետից հետո լրացնել 5-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.            «5. ՀՀ կրթության և գիտության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել «Վահան Թեքեյանի անվան Գյումրու N 2 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ վերակազմակերպումից բխող փոփոխությունների կատարումը և պետական գրանցումը»:</p> <p>Ելնելով առաջարկվող փոփոխությունից՝ ճշտել նախագծի կետերի համարակալումը:</p> <p>4. Նախագծի 5-րդ կետում անհրաժեշտ է նշել, թե առաջարկությունն ում է տրվելու: Այդ առումով հիշյալ կետում «տալ առաջարկություն» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՀՀ կառավարություն ներկայացնել առաջարկություն» բառերով:</p> <p>5. Նախագծի 6-րդ կետում նախատեսված ՀՀ կառավարության որոշման լրիվ անվանումը նշելիս անհրաժեշտ է պահպանել դրանում ներառվող տվյալների հաջորդականությունը՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:</p>	<p>1.Ընդունվել է</p> <p>2.Ընդունվել է</p> <p>3.Ընդունվել է</p> <p>4.Ընդունվել է</p> <p>5. Ընդունվել է</p>	<p>1.Որոշման նախագծում կատարվել է կազմակերպությանն ավան ճշտում :</p> <p>2. Որոշման նախագծի 1-ին կետում հանվել են կրկնվող բառերը:</p> <p>3.Նախագծի 4-րդ կետից հետո լրացվել է նոր 5-րդ կետ, համարակալումները ճշտվել են:</p> <p>4.Նախագծի 5-րդ կետում կատարվել է փոփոխություն:</p> <p>5. Նախագծի 6-րդ կետում կատարվել է փոփոխություն:</p>

2.	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 2017-07-19 թիվ 01/9-2/13157-17</p>	<p>Առաջարկում է Նախագծի հիմնավորման մեջ ներկայացնել քանի սովորող ունի «Վահան Թեքեյանի անվան Գյումրու N2 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը և քանի սովորողի համար է նախատեսված այդ դպրոցը:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Որոշման նախագծի հիմնավորման մեջ առաջարկին համապատասխան կատարվել է լրացում:</p>
3.	<p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն  2017-07-20  01/15.1/4562-17</p>	<p>Առաջարկում է 1.Նախագծի հիմնավորման մեջ բացակայում է վերակազմակերպման արդյունքում հաստիքների հնարավոր կրճատման, ինչպես նաև այդ կրճատվող հաստիքները զբաղեցնող անձանց այլ աշխատանքի տեղավորման հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը: 2.Առաջարկվում է վերախմբագրել Նախագծի վերնագիրը, առաջնորդվելով «Հրավակյան ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով:</p>	<p>1.Ընդունվել է  2.Չի ընդունվում</p>	<p>1. Նախագծի հիմնավորման մեջ լրացվել է կազմակերպությունների վերակազմավորման ժամանակ աշխատողների հետագա աշխատանքի տեղավորման հարցը: 2.Որոշման նախագծի վերնագրում փոփոխելու անհրաժեշտություն չկա, քանի որ վերնագիրը ներառում է վերակազմակերպման մասին իսկ որոշման նախագծի 1-ին կետում վերակազմակերպման տեսակը:</p>
4.	<p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 2017-07-18 թիվ 01/22.23/4316-17</p>	<p>1.Նախագծի նախաբանում հղում կատարել «ՊՈԱԿ-ների մասին» ՀՀ օրենքի ոչ թե 9-րդ հոդվածին, այլ՝ նույն օրենքի 5-րդ և 24-րդ հոդվածներին, ինչպես նաև «Հրավակյան ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասին: 2. Նախագծում ներառել դրույթ 1-ին կետից բխող գույքի հանձնման-ընդունման աշխատանքների և դրանց կատարման ժամկետների վերաբերյալ:</p>	<p>1.Ընդունված է  2.Չի ընդունվում</p>	<p>1.Նախագծի նախաբանում կատարվել է հղում:  2.Նախագծի 1-ին կետում նշած գույքը 2012թ.-04-12 Գույքի հանձնման- ընդունման ակտով հանձնվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը, սակայն կազմակերպության հետ անհատույց օգտագործման պայմանագիր դեռևս կնքված չէ:</p>
5.	<p>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե 2017-07-04 ՄՍ/4221-17</p>	<p>«Գյումրու «Բալատոն» ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին 2010 թ. ապրիլի 22-ին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 519835 վկայականում 30 քառ. մետր մակերեսով կաթսայատան նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարված չէ, ուստի առաջարկվում է ՀՀ</p>	<p>Չի ընդունվում</p>	<p>Որոշման նախագծի 1-ին կետում նշած գույքը դեռևս 2012թ.-04-12 հանձնվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը: Ուստի անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ</p>

		կառավարության որոշման նախագիծը ներկայացնել կաթսայատան նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելուց հետո:		519835 վկայականում համապատասխան փոփոխություն պետք է իրականացնի վարչությունը:
--	--	--	--	--